



ՍՈՒՐԵԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵՎ ԿԵՂԵՑԻ

Գալստեան Կրթակի
21 ՄԱՐՏ 2021

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՒ ԳԻՐՔԵՆ
(66.1-24)

Sէրը այսպէս կ'ըսէ.-
«Երկինքը իմ աթոռս է եւ երկիրը՝
ոտքերուս պատուանդանը: Ինչպիսի՞ տուն պի-
տի շինէք ինծի համար, կամ ո՞ւր պիտի ըլլայ
իմ հանգստավայրս. որովհետեւ երկինքն ու
երկիրը ե՛ս ստեղծեր եմ եւ իմս են,- կ'ըսէ Տէրը:
Սակայն ես պիտի բնակիմ անո՛ր մէջ՝ որ հեզ է
եւ քաղցր, եւ երկիրածութեամբ կը հնազանդի
իմ խօսքերուս:

Գալով անօրէն մարդուն, անոր՝ ինծի եղ
զոհելը մարդասպանութեան համազօր է, ոչչար
զոհելը՝ շուն մորթելու, նաշիհ մատուցանելը՝
խոզի արիւն ընծայելու, եւ իմ անունիս կնդրուկ
ծխելը՝ ինծի հայհոյելու, որովհետեւ իրենք իրենց
ցանկութիւնները կատարեցին եւ հոգիով իրենց
դարշելի կուռքերուն փարեցան: Ուստի ես ալ
հրապարակաւ պիտի խայտառակեմ զիտենք եւ
իրենց մեղքերուն փոխարէնը պիտի հատուցանեմ
իրենց. որովհետեւ կանչեցի զիրենք եւ չլսեցին
զիս, խօսեցայ եւ մտիկ չըրին, եւ ըրին այն ինչ որ
չար է իմ աչքիս, ընտրեցին այն ինչ որ կամքիս
հակառակ էր»: Լսեցէք Տիրոջ պատգամը, ո՛վ
աստուածավախներ. ձեզ ատող եւ ձեզ զգուելի
համարողներուն ըսէք, ո՛վ եղբայրներ, թէ Տիրոջ
անունը պիտի փառաւորուի եւ այդ փառքը ձեր
ուրախութեան մէջ պիտի արտացոլայ, իսկ իրենք
ամօթով պիտի մնան: Ահա քաղաքէն աղաղակ
մը կը լսուի, ձայն մը՝ որ տաճարէն կու գայ: Տիրոջ ձայնն է, որ իրեն հակառակորդներուն հա-
տուցանելիք պատիժը կը վճռէ: Կարելի՞ բան է
որ կին մը հազիւ յղացած՝ ծնի, որ երկունքի ցաւ
չքաշէ եւ առանց երկունքի արու զաւակ մը ծնի:
Միթէ լսուա՞ծ կամ տեսնուա՞ծ բան է որ երկիրը
մէկ օրուան մէջ յղանայ եւ մէկ անգամէն ամբողջ
ազգ մը ծնի: Բայց ահա Ախոնը այդպէս յղացաւ եւ
ծնաւ իր զաւակները: «Ե՛ս այդ յոյսը տուի քեզի,

եւ դուն զիս մոռցար,- կ'ըսէ Տէրը,- մոռցար որ ե՛ս
է որ կը ստեղծեմ ամուլը եւ ծնանողը», - կ'ըսէ քու
Աստուածդ: Ուրախացի՛ր, երուսաղէմ, եւ դուք՝
երուսաղէմը սիրողներ, այնտեղ տօն կատարելու
հաւաքուեցէք. անոր հետ միասին ուրախացէք
եւ ցնծացէք դուք՝ որ անոր համար նստած սուգ
կ'ընէիք, քանի կատարեալ միսիթարութիւն պիտի
գտնէք անոր մայրական գիրկին մէջ, եւ կուշտ
ու կուռ պիտի վայելէք անոր գալիք փառքը:
Որովհետեւ Տէրը այսպէս կ'ըսէ.- «Ահաւասիկ ես
խաղաղութեամբ պիտի ողողեմ զիրենք, գետի մը
պէս, ազգերու փառքով պիտի ծածկեմ, յորդահոս
հեղեղի մը պէս: Անոնց զաւակները ուսերու
վրայ պիտի բերուին եւ ծունկերու վրայ պիտի
գգուուին: Ինչպէս մայր մը կը գգուէ իր մանուկը,
այնպէս պիտի գգուեմ ձեզ եւ միսիթարութիւն
պիտի գտնէք»: Այո՛, պիտի տեսնէք այս բաները
եւ ձեր սիրտերը խնդութեամբ պիտի լեցուին,
ձեր մարմինները դալար խոտի պէս պիտի թար-
մանան: Տիրոջ ձեռքը պահապան պիտի ըլլայ
իր երկիւղածներուն վրայ, իսկ անհաւատներու
գլխուն որպէս սպառնալիք պիտի կախուի,
որովհետեւ ահա Տէրը կու գայ կրակի պէս եւ անոր
կառքերը՝ մըրիկի պէս, իր բարկութեամբ հա-
տուցանելու եւ բոցավառ կրակով բնաջնջելու:
Այո՛, Տէրը կրակով պիտի գատէ բոլոր մարդիկը,
եւ շատ պիտի ըլլան Տիրոջ սուլով ինկողները:
«Անոնք որ մաքրութեան յատուկ ծէսերէ
կ'անցնին՝ պարտէզներու մէջ կուռքեր պաշտելու
համար, եւ սրահներու մէջ քաշուած՝ խոզի
միս, գարշելի կենդանիներ եւ մուկ կ'ուտեն,
միասին պիտի բնաջնջուին, - կ'ըսէ Տէրը,-
որովհետեւ ես գիտեմ իրենց ծածուկ գործերն ու
խորհուրդները: Ահա ես կու գամ բոլոր ազգերն ու
ժողովուրդները հաւաքելու: Անոնք պիտի գան եւ
իմ փառքս տեսնեն: Անոնցմէ ինծի հաւատարիմ
մնացողներուն վրայ նշան պիտի դնեմ, եւ այդ
փրկուածները պիտի զրկեմ բոլոր ազգերուն,
դէպի Սպանիա, Լիպիա, Լիդիա, Փոխրդիա,
Կիլիկիա եւ Յունաստան, եւ մինչեւ հեռաւոր

Կղզիներ որոնք իմ անունս չեն լսած եւ փառքս չեն տեսած: Անոնք այս ազգերուն պիտի պատմեն իմ փառքս եւ անունս, եւ բոլոր ազգերուն մէջէն ձեր եղբայրները գտնելով՝ զանոնք ինծի պիտի բերեն որպէս: Պիտի բերեն ձիերով ու կառքերով, եւ ձիաքարշ ծածկաւոր գահաւորակներով, այնպէս՝ ինչպէս հսրայէլի որդիները սաղմոսելով իմ տաճարս կու գային իրենց զոհերը ինծի բերելով. եւ ես անոնց մէջէն ինծի համար քահանաներ ու ղեւտացիներ պիտի ընտրեմ, – կ'ըսէ Տէրը: Եւ ինչպէս նոր երկինքն ու նոր երկիրը զոր ահա ես կը ստեղծեմ ինձմով պիտի գոյատեւեն, այնպէս ալ ձեր սերունդն ու ձեր անունը ինձմով պիտի գոյատեւեն, – կ'ըսէ Տէր Աստուած, – եւ իրենց դէմ մեղանչած մարդոց դիակները, որոնց վրայէն որդերը պիտի չպակին, եւ որոնք անդադար պիտի այրին, բոլոր մարդոց օրինակ ըլլալու համար»:

ԸՆԹԵՐՑՈՒՄ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՈՍԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՆ (2.16-3.17)

Վարեւորութիւն մի՛ տաք անոնց որոնք ձեզ կը քննադատեն թէ ինչո՛ւ չէք պահեր ուտելու եւ խմելու, տօնակատարութեանց, ամսամուտերու եւ ծարաթ օրերու վերաբերող կանոնները. որովհետեւ այդ բոլորը գալիք իրականութեանց չուքն էին, իսկ իրականութիւնը Քրիստոսի մէջ է:

Զըլլայ որ ուեէ մէկը իր խստակրօնութեամբ, հրեշտակներուն տուած կարեւորութեամբ եւ զանազան բաներու տեսիլքներով ձեզ մոլորեցնէ եւ մրցանակէն զրկէ. որովհետեւ այդպիսիները մարդկային հպարտութենէ տարուած են եւ կ'ուզեն իրենք զիրենք պարտադրել ձեզի: Անոնք կապ չունին Գլուխին՝ Քրիստոսի հետ. մինչեւ մարմինը՝ Քրիստոսի եկեղեցին, իր բոլոր յօդերով ու խաղերով Գլուխին կապուած ու միացած, անկէ կ'առնէ իր աճումը, Աստուծոյ կամքին համաձայն:

Քանի Քրիստոսի հետ մեռաք եւ բնութեան ոյժերու տիրապետութենէն դուրս եկաք, ինչո՞ւ կը շարունակէք ապրիլ այնպէս՝ որպէս թէ ձեր կեանքը աշխարհէն կախում ունենար, եւ կը հնազանդիք մարդոց կողմէ տրուած եւ ուսուցուած պատուիրաններու, ինչպէս. «Մի՛ մօտենար, մի՛ ուտեր, մի՛ դպչիր», եւայլն: Ասոնք բոլորն ալ բաներ են՝ որոնք գործածութեամբ կը

փճանան: Այդպէս պատուիրողները իմաստուն կրնան թուիլ՝ իրենց բարեպաշտական ինքնակամ արտայայտութիւններով, խստակրօնութեամբ եւ մարմինը անխնայ կերպով ճնշելով, բայց այս բաները որեւէ արժէք չունին եւ միայն մարմինը բաւարարելու կը ծառայեն:

Քանի որ յարութիւն առիք Քրիստոսի հետ, այսուհետեւ ձեր ուշադրութիւնը երկինք դարձուցէք, որովհետեւ հոն է Քրիստոս, Հօր աջ կողմը նստած: Երկնաւոր բաներու մասին խորհեցէք եւ ոչ երկրաւոր բաներու. որովհետեւ դուք այս աշխարհին համար մեռաք, որպէսզի Քրիստոսի հետ միասին ապրիք այն կեանքով որ Աստուած վերապահած է ձեզի: Իսկ երբ Քրիստոս՝ մեր կեանքը՝ յայտնուի, այն ատեն դուք ալ փառքով պիտի յայտնուիք անոր հետ:

Հետեւաբար մեռցուցէք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ դուրս վանեցէք պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը եւ ագահութիւնը՝ որ կուապաշտութիւն է. որովհետեւ այդ բոլորը Աստուծոյ անհնազանդ մարդոց գործերն են, եւ Աստուած պիտի պատժէ զանոնք: Նախապէս դուք ալ այդ բոլորը կ'ընէիք, երբ տակաւին այդ ցանկութիւններով կ'ապրէիք: Բայց հիմա ձեզմէ դուրս նետեցէք բարկութիւնը, զայրոյթը եւ չարութիւնը: Զեր բերնէն որեւէ հայհոյութիւն կամ լկտի խօսք չլսուի: Սուտ մի՛ խօսիք իրարու: Մոոցէք ձեր հին կեանքն ու նախկին գործերը, եւ նոր մարդ եղէք՝ ձեր Արարիչին պատկերին համաձայն նորոգուելով, որպէսզի զԱստուած ճանչնաք: Անգամ մը որ նորոգուեցաք՝ ա՛լ չկայ հրեայ կամ հեթանոս, թլփատուած կամ անթլփատ, բարբարոս, վայրենի, ծառայ կամ ազատ. կայ միայն Քրիստոս, որ ամէն ինչ է եւ բոլորին մէջ:

Հետեւաբար, որպէս Աստուծոյ կողմէ ընտրուած ու սրբուած եւ իր սէրը վայելող մարդիկ՝ գթասիրտ եղէք. եղէք ողորմած, քաղցր, խոնարհ, հեղ եւ համբերատար: Իրարու հանդէպ հանդուրժող եղէք. եւ ներեցէք իրարու, երբ մէկդ միւսին դէմ տրտունջ մը ունենաք: Ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցաւ ներեց ձեզի, այնպէս ալ դուք իրարու ներեցէք: Եւ այս բոլորին վրայ՝ աւելի սէր ունեցէք, որովհետեւ սէրը ամէն ինչի ամբողջացուցիչ շաղախն է: Զեր սիրտերուն մէջ Քրիստոսի խաղաղութիւնը թող թագաւորէ, որովհետեւ Աստուած այդ խաղաղութեան կանչեց ձեզ մէկ մարմնի մէջ, որ Քրիստոսի եկեղեցին է:

Ուստի շնորհակալ եղէք Աստուծոյ:

Թող Քրիստոսի խօսքը ձեր մէջ բնակի իր ամբողջ հարստութեամբ, որպէսզի կատարեալ իմաստութեամբ սորվեցնէք իրարու եւ զիրար խրատէք, եւ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով ձեր սիրտերուն մէջ շնորհակալութեամբ զԱստուած օրհնէք: Եւ ինչ որ ալ ընէք, խօսքով թէ գործով, միշտ Տէք Յիսուսի անունով ըրէք, անոր միջոցաւ գոհութիւն յայտնելով Հօր Աստուծոյ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ

ԸՍ ՄԱՏԹԵՈՍԻ

(22.34-23.39)

Երբ փարիսեցիները լսեցին, թէ Յիսուս սադուկեցիները պապանձեցուց, իրարու քով եկան: Անոնցմէ մէկը, օրէնսդէտ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց. «Վարդապե՛տ, Օրէնքին մէջ ո՞րն է մեծագոյն պատուիրանը»: Յիսուս ըսաւ անոր. «Սիրէ քու Տէք Աստուածդ ամբողջ սրտովդ, ամբողջ հոգիովդ եւ ամբողջ մտքովդ»: Ասիկա է մեծագոյն եւ առաջին պատուիրանը: Երկրորդը ասոր նման է, «Սիրէ ընկերդ քու անձիդ պէս»: Այս երկու պատուիրաններէն կախեալ են ամբողջ Օրէնքը եւ մարգարէութիւնները»:

Երբ փարիսեցիները հաւաքուեցան, Յիսուս հարցուց անոնց. «Ի՞նչ կը խորհիք Քրիստոսի, խոստացուած Փրկիչին մասին: Որո՞ւն որդին է ան»: Անոնք պատասխանեցին. «Դաւիթի»: Յիսուս ըսաւ անոնց. «Բայց ինչպէ՞ս Դաւիթ Ա. Հոգիով ներշնչուած՝ զայն Տէք կը կոչէ ու կ'ըսէ. «Տէրը իմ Տիրոջ ըսաւ.- Աշ կողմս նստէ, մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան»:

«Արդ, եթէ Դաւիթ զայն Տէք կը կոչէ, ինչպէ՞ս անոր որդին կ'ըլլայ»: Ոչ ոք կրցաւ պատասխան տալ Յիսուսի. եւ այդ օրուընէ սկսեալ ոեւէ մէկը չէք համարձակեր իրեն հարցում ուղղել:

Ապա Յիսուս ժողովուրդին եւ իր աշակերտներուն ըսաւ.

«Մովսէսի աթոռը նստան օրէնքի ուսուցիչներն ու փարիսեցիները: Իրենց ըսածներուն հնագանդեցէք եւ կատարեցէք զանոնք, սակայն մի՛ ընէք ինչ որ իրենք կ'ընեն. որովհետեւ անոնք կը սորվեցնեն, բայց չեն կատարեր: Անոնք ծանր եւ դժուարակիր բեռներ կը դնեն մարդոց ուսերուն, մինչ իրենք նոյն բեռները կրելու նուազագոյն ճիգն իսկ չեն ըներ: Ինչ որ կ'ընեն՝ մարդոց

երեւելու համար կ'ընեն: Իրենց գրապանակները կը լայնցնեն եւ իրենց հագուստներուն ծոպերը կ'երկնցնեն: Ընթրիքներու ընթացքին պատուոյ տեղերը գրաւել կը սիրեն եւ ժողովարաններու մէջ՝ առաջին աթոռները: Կը սիրեն հրապարակներու վրայ մարդոցմէ բարեւներ ընդունիլ եւ “Վարդապետ”, այսինքն “ուսուցիչ” կոչուիլ: Բայց դուք ոեւէ մէկը “վարդապետ” մի կոչէք, որովհետեւ դուք բոլորդ եղեայրներ էք եւ մէկ ուսուցիչ ունիք: Երկրի վրայ ոեւէ մէկը “հայր” մի՛ կոչէք, որովհետեւ դուք մէկ հայր ունիք, որ երկինքի մէջ է: “Առաջնորդ” մի՛ կոչուիք, որովհետեւ ձեր միակ առաջնորդը Քրիստոս է: Զեր մէջէն մեծը թող ձեր սպասաւորը ըլլայ: Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ երկինքի արքայութիւնը կը փակէք մարդոց առջեւ. դուք չէք մտածեր եւ թոյլ չէք տար նաեւ անոնց որ կ'ուզեն մտնել:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մէկ կողմէ այրիներուն տուները իրենց ձեռքէն կը յափշտակէք, միւս կողմէ կեղծաւորութեամբ ձեր աղօթքը կ'երկարէք. ասոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունիք:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մէկ կողմէ ծով ու ցամաք կը շրջիք մէկը նորահաւատ ընելու համար, իսկ երբ յաջողիք՝ զայն ձեզմէ կը կնապատիկ աւելի գեհենի արժանի կ'ընէք:

«Վա՛յ ձեզի, կոյր առաջնորդներ: Կ'ըսէք. “Ան որ տաճարին վրայ կ'երդնու՝ երգումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ կ'երդնու սեղանին գրուած գոհին վրայ՝ պարտաւոր է կատարելու”: Յիմարներ, կոյրե՛ր. ո՞ր մէկը աւելի կարեւոր է. ոսկի՞ն թէ տաճարը, որ կը սրբագործ ոսկին: Կամ կ'ըսէք. “Ան որ զոհի սեղանին վրայ երգում կ'ընէ՝ երգումը կատարելու պարտաւորութեան տակ չէ, բայց ան որ կ'երդնու սեղանին գրուած գոհին վրայ՝ պարտաւոր է կատարելու”: Յիմարներ, կոյրե՛ր. ո՞ր մէկը աւելի կարեւոր է. զո՞հը թէ զոհասեղանը, որ կը սրբագործ զոհը: Հետեւաբար, ով որ կ'երդնու սեղանին վրայ, կ'երդնու թէ սեղանին եւ թէ հոն եղածներուն վրայ: Ով որ կ'երդնու տաճարին վրայ, կ'երդնու թէ տաճարին եւ թէ Աստուծոյ վրայ, որ հոն կը բնակի: Նոյնպէս, ով որ կ'երդնու երկինքի վրայ,

կ'երդնու թէ՛ Աստուծոյ գահին եւ թէ՛ Աստուծոյ վրայ, որ հոն կը նստի:

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ անանուխին, սամիթին եւ չամանին տասանորդը կու տաք եւ կ'անտեսէք Օրէնքին կարեւոր պարտաւորութիւնները, այսինքն՝ արդարութիւնը, ողորմութիւնը եւ հաւատարմութիւնը։ Ասոնք պէտք է գործադրել, առանց միւսները անտեսելու։ Կո՛յր առաջնորդներ, մէկ կողմէ մժղուկը կը քամէք, միւս կողմէ սակայն ուղար կը կլէք։

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ պնակին ու գաւաթին արտաքինը կը մաքրէք, մինչ գիտէք թէ ներսիդին եղող ուտելիքն ու խմելիքը ի՞նչ յափշտակութեամբ եւ աղտեղութեամբ ձեռք բերած էք։ Կո՛յր փարիսեցի, նախ գաւաթին եւ պնակին ներսը մաքրէ. այսպիսով դուրսն ալ մաքուր կ'ըլլայ։

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ կը նմանիք կիրով ճերմկցուած գերեզմաններու, որոնք արտաքնապէս գեղեցիկ կ'երեւին, բայց ներքնապէս լեցուն են մեռելներու ոսկորներով եւ ամէն տեսակի պղծութեամբ։ Նոյնպէս էք դուք. արտաքնապէս մարդոց արդար կ'երեւիք, բայց ներքնապէս լեցուն էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ։

«Վա՛յ ձեզի, կեղծաւորներ, օրէնքի ուսուցիչներ եւ փարիսեցիներ, որ մարդարէներու

շիրիմները կը շինէք եւ արդարներուն գերեզմանները կը զարդարէք ու կ'ըսէք. “Եթէ մենք մեր հայրերուն ժամանակը ապրած ըլլայինք, մարդարէներու սպանութեան մասնակից պիտի չըլլայինք”։ Ահաւասիկ, դուք արդէն իսկ կը վկայէք թէ որդիներն էք անոնց՝ որոնք մարդարէները կոտորեցին։ Գայցէք ամբողջացուցէք ձեր հայրերուն կիսատ ձգած գործը։ Օձե՛ր, իմերո՛ւ ծնունդներ, ինչպէ՞ս պիտի կարենաք փախուստ տալ դժոխքի դատապարտութենէն։ Ահա, ես ձեզի մարդարէներ, իմաստուններ, օրէնքի ուսուցիչներ պիտի դրկեմ. դուք անոնցմէ ոմանք պիտի սպաննէք, ոմանք խաչէք, ուրիշներ ժողովարաններու մէջ պիտի չարչարէք եւ հալածէք քաղաքէ քաղաք։ Այսպիսով բոլոր արդարներուն սպանութեան մասնակից եղած պիտի ըլլաք, սկսեալ անմեղ Աբէլի արիւնէն մինչեւ արիւնը Բաքիայի որդի Զաքարիայի, զոր սպաննեցիք տաճարին եւ զոհասեղանին մէջտեղ։ Հաստատ գիտցէք, թէ այս բոլոր ոճիրներուն պատիժը պիտի կրէք դուք։

«Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կը կոտորէիր մարդարէները եւ կը քարկոծէիր Աստուծոյ քեզի դրկած մարդիկը. քանի՛ անգամ ուզեցի որդիներդ հաւաքել, ինչպէս հաւը իր ձագերը կը հաւաքէ թեւերուն տակ, բայց դուք, Երուսաղէմի՛ բնակիչներ, չուզեցիք։ Ահա, “աւերակ պիտի ըլլայ ձեր տունը”։ Բայց կ'ըսեմ նաեւ, ա՛լ պիտի չտեսնէք զիս մինչեւ որ ըսէք. “Օրինեալ ըլլայ ան որ կու գայ Տիրոց անունով”»։

Ս. Յակոբ Առաջնորդական Մայր Եկեղեցի ՀՍԿՈՒՄԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ ՈՒ ԼՍՂՐԱՆ՝

6.- Չորեքշաբթի, 24 Մարտ

Սկիզբ Ժամերգութեան՝ 18.30

«Հոգեւոր Ճամբորդութիւնը», կը խորհրդածէ

Առաջնորդ սրբազնը՝ Գերշ. Տ. Բարգէն Արքեպիսկոպոս

Հոգեւանգստեան պաշտօն խնդրելու եւ կամ նուիրատուութեամբ
մասնակցելու համար, հաճեցէք շաբթուան մէջ հեռաձայնել քարտուղարութեան
514 331 5445 կայան 202: